



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ԼԱ ԶՐԵՍԵՆԹԱՅԻ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Կիրակի, Ապրիլ 15ին կ.ե. ժամը 1-ին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Զրեսենթա Հովիտի Հայստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ, Լա Զրեսենթա:

### **HOLY MASS AT THE CRESCENTA VALLEY PARISH**

On Sunday, April 15<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will conduct Holy Mass and deliver the sermon at the Armenian Apostolic Church of Crescenta Valley, in La Crescenta. The service will begin at 1:00 p.m.

### **ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՉԱՏԿԱԿԱՆ ԱՄԱՆԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**

Տարիներու բարի աւանդութիւն է, որ Ս. Յարութեան տօնի վաղորդայնին, Արեւմտեան մեր Թեմի Ազգային Առաջնորդարանի ընտանիքը ի մի խմբուի ու գատկական շնորհաւորանքներ փոխանակէ մտերմիկ մթնոլորտի մէջ:

Այս տարի եւս, գատկական մտերմիկ այդ հաւաքոյթը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 12 Ապրիլի կեսօրին, Ազգային Առաջնորդարանի յարկին տակ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր շուրջ համախմբուեցան հոգեւորականաց դասու, Կրօնական Ժողովի, Ազգային Վարչութեան, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի եւ ծխական շրջաններու հոգաբարձութեանց ու Տիկնանց Միութեանց ներկայացուցիչները, հիւրընկալութեամբ Առաջնորդարանիս Տիկնանց Օժանդակ Մարմինին, որ այս առիթով՝ պատրաստած էր Չատկական սիրոյ սեղան մը:

Առաջնորդ Սրբազանին ու հոգեւորականաց դասու անդամներուն միացեալ աղօթքով ու Ս. Յարութեան տօնին նուիրուած շարականներու երգեցողութեամբ, տեղի ունեցաւ տնօրինեքի արարողութիւն: Ապա տեղի ունեցաւ հաւկթախաղ ու շնորհաւորանքներու փոխանակում:

Ճաշի պահուն, սրտի ու գնահատանքի խօսքեր արտասանեցին Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Ազգ. Վարչութեան գանձապահ՝

Տիար Վահան Պզտիկեան, Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենապետուհի Տիկ. Մարիամ Կարապետեան, Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման Յանձնախումբի ատենապետ Տիար Զրայր Ճերմակեան, Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Տիար Սարգիս Թաթիկեան եւ ուրիշներ:

Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Զայրը բարձր գնահատեց մեր եկեղեցւոյ ու Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան նուիրեալ ծառայողներուն անձնփորձաշխատանքը եւ մաղթեց, որ մեր ժողովուրդին հոգեւոր ու ազգային կարիքներուն ի խնդիր օգտաշատ գործը շարունակուի վերանորոգ կորովով ու յանձնառութեամբ:

## **WESTERN PRELACY FAMILY CELEBRATES EASTER**

On Thursday, April 12, the Western Prelacy family gathered at an intimate reception to celebrate Easter. The Prelacy Religious and Executive Councils, Ladies Auxiliary Guild, parish Board of Trustees and Ladies association members gathered at the Prelacy “Dikran and Zarouhi Der Ghazarian” Hall to celebrate Easter with the Prelate and to convey well wishes to each other.

The reception officially began with the blessing of the home ceremony by the Prelate and clergy followed by the singing of the Easter hymn. During lunch, remarks were offered by Very Rev. Fr. Barthev Gulumian, Executive Council treasurer Mr. Vahan Bezdikian, Ladies Auxiliary Chair Ms. Mariam Karapetian, Outreach Committee Chair Mr. Hrair Jermakian, and St. Sarkis Board of Trustees Chair Mr. Sarkis Tatuigian.

In his remarks the Prelate highly commended the devoted servants of our Prelacy and churches.

## **ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՆԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՁԵՆԱՐԿ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՁ**

Ուրբաթ, Ապրիլ 13-ին, երեկոյեան ժամը 8-ին, Եղեռնի 92ամեակի ոգեկոչման դասախօսութիւն մը տեղի պիտի ունենայ Փասատինայի Զայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Ալէքս Մանուկեան կեդրոնին մէջ: Օրուան բանախօսն է Զայ Դատի յանձնախումբի Արեւմտեան Միացեալ Նահանգներու ատենապետ Ռաֆֆի Զամբարեան:

Ձեռնարկը կազմակերպուած է Վարդանանց Ասպետներու եւ Փասատինա քաղաքի յարակից միութիւններուն կողմէ: Յանուն Առաջնորդ Սրբազան Զոր, Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

## **ARMENIAN GENOCIDE COMMEMORATION IN PASADENA**

The Pasadena chapter of Knights of Vartan and local community organizations will commemorate the 92<sup>nd</sup> anniversary of the Armenian Genocide featuring Armenian National Committee Western Region Chairman Raffi Hamparian as the keynote speaker. The event will take place on Friday, April 13, at 8:00 p.m. at the AGBU Alex Manoogian Center in Pasadena.

Very Rev. Fr. Muron Aznikian will be in attendance on behalf of the Prelate.

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ի ՅԻՇԱՏԱԿ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Երկուշաբթի, Ապրիլ 23-ի, երեկոյեան ժամը 7-ին, Հայկական Ցեղասպանութեան 92րդ տարելեիցին առթիւ Ս. Պատարագ եւ Հոգեհանգիստ տեղի պիտի ունենայ Կլենտելի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, մասնակցութեամբ Հայ Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Հոգեւորականներուն:

Պիտի պատարագէ Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան, խօսք պիտի առնեն Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ Արեւմտեան Թեմի, Հոգշ. Տ. Անտոն Վրդ. Սարոյեան, Ժողովրդապետ Հայ Կաթողիկէ Համայնքի, եւ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան, Հովիւ Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսաւոր հոգեգանգստեան արարողութիւն պիտի կատարուի եկեղեցւոյ Նահատակաց խաչքար-Յուշարձանին առջեւ:

Երեքշաբթի, Ապրիլ 24-ին, կ.ա. ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 2-ը, Սոնթեպելլոյի Ապրիլեան Նահատակաց Յուշարձանին առջեւ ժողովուրդին կողմէ ծաղկեփունջերու գետեղում պիտի կատարուի:

Նոյն օրը, ժամը 11-ին, դարձեալ Սոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ հայկական երեք յարանուանութեանց հոգեւորականներու մասնակցութեամբ տեղի պիտի ունենայ հաւաքական հոգեհանգիստ:

## HOLY MASS AND REQUIEM IN REMEMBRANCE OF THE MARTYRS OF THE ARMENIAN GENOCIDE

On Monday, April 23<sup>rd</sup>, clergy from the Armenian Apostolic, Catholic, and Evangelical Churches will gather at St. Mary's Church in Glendale to collectively commemorate the 92<sup>nd</sup> anniversary of the Armenian Genocide with Holy Mass followed by a requiem service.

Very Rev. Fr. Muron Aznikian will conduct Mass and remarks will be offered by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Very Rev. Fr. Andon Saroyan, Rector of the Armenian Catholic Church, and Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of North America.

On Tuesday, April 24<sup>th</sup>, there will be placing of flowers at the Genocide Memorial Monument in Montebello from 10:00 a.m. to 2:00 p.m. At 11:00 a.m. the three Churches will participate in a collective requiem at the monument.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.